ԾԹ. Համբարձումն Քրիստոսի յերկինս եւ գալուստ Հոգւոյն սրբոյ ի դասս առաքելոց։

Կ. Կանխասացութիւնք մարգարէից վասն գալստեան Հոգւոյն սրբոյ, եւ խորհրդածութիւն հրակերպ երեւման շնորհաձիր լեզուաց ի սուրբ վերնատանն։

ԿԱ. Խոստմունք հոգեձիր պարգեւաց հաւատացելոց եւ սպառնալիք պատժոց անհաւատից։

ԿԲ. Հատուցումն վարձուց եւ պատժոց ըստ իւրաքանչիւր գործոց։

ԿԳ. Ունայնութիւն պաշտաման սնոտի կռոց եւ մշտնջենաւոր դատապարտութիւն հեթանոսաց։

ԿԴ. Յաւիտենական փառք հաւատացելոց ի Քրիստոս ի յարութեան մարմնոց։

ԿԵ. Գտանել զթողութիւն զղջացելոցն յաստի կեանս եւ աններելի պատուհասն անզղջից։

ԿԶ. Միահամուռ ամբարշտութիւն Սոդոմայեցւոց եւ հրդեհակէզ պատուհաս նոցա։

ԿԷ. Յուսադրութիւն ներողութեան առ անգիտութեամբ սպանանելոյ զսուրբ կուսանսն, եւ յորդոր ապաստանելոյ յողորմութիւնն Աստուծոյ։

ԿԸ. Սիւնն անձրեւաձիր եւ հրացայտ՝ աւրինակ գթութեանն Աստուծոյ առ զղջացեալսն եւ բարկութեանն՝ առ անզեղջսն։

ԿԹ. Երեւումն Աստուծոյ ամպով լուսատեսիլ եւ հրաբորբոք՝ ի նշանակ լուսաւորելոյ զարդարս եւ այրելոյ զմեղաւորս։

Հ. Պատիժն ամբարշտաց յառաջին դարուն ի զգաստութիւն ապագայիցս։

ՀԱ. Երանական փառք սրբոց Հռիփսիմեանց եւ հաշտարար բարեխաւսութիւն նոցա։

ՀԲ. Խոնարհել բանին Աստուծոյ յերկիր՝ ի լուսաւորել զհաւատացողսն եւ ի կիզուլ զանհաւանսն։

ՀԳ. Առատ մարդասիրութիւնն Քրիստոսի ի կոչել զմեղաւորս յարքայութիւնն երկնից։

ՀԴ. Շինութիւն վաղափուլ աշտարակին եւ բաժանումն լեզուաց։

ՀԵ. Պնդութիւն հաւատոց առաքելոցն Քրիստոսի եւ սրբոց վկայից, եւ յորդոր հաստատելոյ ի նոյն հաւատս ճշմարտութեան։ Կատարել Քրիստոսի զկամս Հաւր՝ զփրկութիւն ազգի մարդկան, եւ տալ իշխանութիւն սրբոց՝ որդիս Աստուծոյ լինել։

ՀԶ. Հարկաւորութիւն մարդեղութեանն Քրիստոսի ի փրկել զաշխարհ։